ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2024թ. թիվ 168-Ա

ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ Գ.ՇԱՎԻՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի մարտի 20-ի թիվ 164-Ա որոշումը և հաշվի առնելով Գ.Շավինյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի ուսուցիչ Գոհար Մովսեսի Շավինյանի վրա:

2. «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Գ.Շավինյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մարտի 22-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

21/03/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 21
ք.Վանաձոր